ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 737Ա

26 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԻ 04-087-0070-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57 -րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Գեղակերտ գյուղի Հ. Հովհաննիսյան փողոց թիվ 6 տան բնակիչ Հայկանուշ Մարատի Մկրտչյանի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Գեղակերտ գյուղի 04-087-0070-0019 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 17032020-04-0049 տրված՝ 17.03.2020թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04012RQ3YLVR/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Գեղակերտ գյուղ, Ա. Թամանյան փողոց, թիվ 35 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 738Ա

26.05.2026թ.

ք. Էջմիածին

## ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.07.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 753-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 3.4-րդ և 4-րդ մասերը և «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 2-րդ կետը, 2025 թվականի նոյեմբերի 23-ի « Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների արդյունքներով Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրվելու մասին» թիվ 37-Ա որոշումը ու Վաղարշապատ և Խոյ համայնքների միավորման և նոր՝ Վաղարշապատ համայնքի ձևավորման փաստը, ՀՀ Կադաստրի կոմիտեի 27.11.2025թ. թիվ Կ-27112025-04-0274 որոշումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Խոյ համայնքի ղեկավարի 29.07.2025թ. «Ավել օգտագործվող 0,02հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 753-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) Հիմնական մասում նշված «Խաժակ Գերասիմի Բաբայանի» բառերից հետո լրացնել « Թեհմինե Գերասիմի Բաբայանի և Թերեզա Գերասիմի Բաբայանի» բառերը,

2) Որոշման 1-ին կետում նշված «Խաժակ Գերասիմի Բաբայանին» բառերից հետո լրացնել

« Թեհմինե Գերասիմի Բաբայանին և Թերեզա Գերասիմի Բաբայանին» բառերը,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 739Ա

26.05.2026թ. ք.Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՇԱՏ ԳՅՈՒՂԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Անի Տիգրանի Եգոյանի դիմումը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18042026-04-0086 տրված՝ 18.04.2026թ., «ԴԱՎԻԹ ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻԿԻ» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0526/ կողմից 23.04.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04042XMZFA6D, 04042VDA7YLA/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Այգեշատ գյուղի Երևանյան 2-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Այգեշատ գյուղ, Երևանյան 2-րդ փողոց, թիվ 12/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Այգեշատ գյուղ, Երևանյան 2-րդ փողոց, թիվ 12 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 740Ա

26.05.2026թ. ք.Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԻ 04-021-0295-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57 -րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Արշալույս գյուղի 16-րդ փողոց թիվ 60 տան բնակիչ Լևոն Գագիկի Շահգալդյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0295-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01062021-04-0055 տրված՝ 01.06.2021թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04062Y9PBGC3/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արշալույս գյուղ, 1-ին փողոց, թիվ 103 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 741Ա

26.05.2026թ.

ք.Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Անահիտ Ռաֆիկի Սահակյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 09032026-04-0095 տրված՝ 23.05.2000թ., «Հռիփսիմե Կիրակոսի Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 21.04.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04052AKLC3EM, 04052TBA78MY/.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Արագած գյուղի Սուրբ Ստեփանոսի փողոց թիվ 53 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արագած գյուղ, Սուրբ Ստեփանոսի փողոց, թիվ 53/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արագած գյուղ, Սուրբ Ստեփանոսի փողոց, թիվ 53 հողամաս :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 742Ա

26.05.2026թ. ք.Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Անահիտ Սեդրակի Սահակյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 07042026-04-0119 տրված՝ 07.04.2026թ., «ՍԵՎԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 17.04.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հացեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 041124MMCLTE, 04112GA46WEV/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ծաղկունք գյուղի Պ. Սևակի փողոց թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք գյուղ Հոկտեմբերյան փողոց թիվ 2/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք գյուղ Պ. Սևակի փողոց թիվ 1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 743Ա

27 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

## «ԿԱՐՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջերով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և «ԿԱՐՅԱՆ» ՍՊ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 26-ի N 8325).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ԿԱՐՅԱՆ» ՍՊ ընկերությանը 2026 թվականի մայիս ամսվա ընթացքում տալ Վաղարշապատ համայնքի տարածքում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն՝ ըստ ներկայացված հասցեների (Թույլտվություն N 175 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 744Ա

27 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏԻ»-ԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 15-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏԻ» հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 26-ի N 8327).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՇՈՏԻ»-ին 2026 թվականի մայիս ամսվա ընթացքում տալ Վաղարշապատ համայնքի տարածքում այլ արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն՝ ըստ ներկայացված հասցեների (Թույլտվություն N 176 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Կարեն Աշոտի Կարապետյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Recoverable Signature

X

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 745-Լ

27 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 31-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 47 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2026 թվականի հոինվարի 15-ի <<«Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 31-Լ որոշմամբ

հաստատված թիվ 47 հավելվածում կատարել լրացում և այն հաստատել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ**

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 746Ա

27 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲԵՐԴ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.062 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի, 100-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի և 101-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Լիդա Վասակի Հարությունյանի 2026 թվականի մայիսի 20-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ամբերդ գյուղում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ 0.062 հա մակերեսով / հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2354575, տրված ՝ 04.09.2007թ./ հողամասից հրաժարվելու մասին դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Ամբերդ գյուղում գտնվող՝ 0.062 հա մակերեսով /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2354575, տրված ՝ 04.09.2007թ./ հողամասի նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի սեփականությունը՝ Լիդա Վասակի Հարությունյանի կողմից նշված հողամասից կամովին հրաժարվելու հիմքով:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքներն ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 747Ա

27.05. 2026թ. ք.Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 04-081-0004-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Հոքապետ Թևասի Ռաթավոսի լիազորված անձ Ղևոնդ Սերոբի Բիլյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 04-081-0004-0009 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 2544582 տրված՝ 11.06.2008թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022LSCQTFR/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ գյուղ, 4-րդ փողոց, թիվ 18 հողամաս:
2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ